

ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

Պնևմոնոկոկային պոլիսախարիդի պատվաստանյութ ԻՆՆԷ և անհրաժեշտ ձեռք իմանալ:

Many Vaccine Information Statements are available in Armenian and other languages. See www.immunize.org/vis
Պատվաստանյութի վերաբերյալ շատ տեղեկատվական նյութեր հասանելի են հայերենով և այլ լեզուներով: Տե՛ս՝ www.immunize.org/vis

1 Ինչո՞ւ պատվաստվել:

Պատվաստումը կարող է պաշտպանել մեծահասակներին (և որոշ երեխաների ու երիտասարդներին) պնևմոնոկոկային հիվանդությունից:

Պնևմոնոկոկային հիվանդությունը հարուցվում է մանրէի կողմից, որը կարող է տարածվել մեկ անձից մյուսին՝ անմիջական շփման միջոցով: Այն կարող է առաջացնել ականջի վարակներ, և կարող է հանգեցնել նաև ավելի լուրջ վարակների՝

- Թոքեր (թոքաբորբ),
• Արյուն (բակտերեմիա), և
• Ուղեղի և ողնուղերի թաղանթ (մենինգիտ):
Մենինգիտը կարող է խլության և ուղեղի վնասվածքի պատճառ հանդիսանալ և կարող է մահաբեր լինել:

Ցանկացած անձ կարող է պնևմոնոկոկային հիվանդություն ստանալ, սակայն 2 տարեկանից ցածր երեխաները, որոշակի առողջական խնդիրներ ունեցողները, 65 և ավելի մեծ տարիքի մարդիկ և սիգարետ ծխողներն ավելի մեծ ռիսկի տակ են:

Ամեն տարի Միացյալ Նահանգներում պնևմոնոկոկային հիվանդությունից մոտավորապես 18000 մեծահասակ է մահանում:

Պնևմոնոկոկային վարակների բուժումը պենիցիլինով և այլ դեղերով ժամանակին արդյունավետ էր: Սակայն հիվանդության որոշ շտամներ դիմադրողականություն են ձեռք բերել այդ դեղերի հանդեպ: Պատվաստման միջոցով հիվանդության կանխարգելումը այդ պատճառով դառնում է էլ ավելի կարևոր:

2 Պնևմոնոկոկային պոլիսախարիդի պատվաստանյութը (PPSV23)

Պնևմոնոկոկային պոլիսախարիդային պատվաստանյութը (PPSV23) պաշտպանում է 23 տեսակի պնևմոնոկոկային բակտերիաներից: Այն չի կանխարգելում բոլոր տեսակի պնևմոնոկոկային հիվանդությունները:

PPSV23-ը խորհուրդ է տրվում՝

- 65 և ավել տարեկան բոլոր մեծահասակներին,
• 2-ից մինչև 64 տարեկան ցանկացած մեկին, ով որոշակի երկարատև առողջական խնդիրներ ունի,
• 2-ից մինչև 64 տարեկան ցանկացած մեկին, ում իմունային համակարգը թուլացած է,
• 19-ից մինչև 64 տարեկան մեծահասակներին, ովքեր սիգարետ են ծխում կամ ասթմա ունեն:

Մարդկանց մեծ մասին PPSV-ի միայն մեկ դեղաչափ է անհրաժեշտ: Երկրորդ դեղաչափը խորհուրդ է տրվում որոշակի ռիսկային խմբերի: 65 և ավել տարիքի մարդիկ պետք է դեղաչափը ստանան, նույնիսկ, եթե մեկ կամ ավելի դեղաչափեր էին ստացել մինչև 65 տարեկան դառնալը:

Ձեր առողջապահական խնամք ապահովողը ավելի շատ տեղեկություններ կարող է հաղորդել այդ խորհուրդների վերաբերյալ:

Առողջ մեծահասակների մեծ մասի մոտ պաշտպանությունն առաջ է գալիս ներարկումից 2-ից 3 շաբաթ հետո:

3 Որոշ մարդիկ չպետք է ստանան այս պատվաստանյութը

- Ցանկացած անձ, ով PPSV-ի նկատմամբ ունեցել է կյանքին վտանգ սպառնացող ալերգիկ ռեակցիա, չպետք է ստանա մեկ այլ դեղաչափ:
• Ցանկացած անձ, ով PPSV-ի որևէ բաղադրիչի նկատմամբ ունեցել է սուր ալերգիկ ռեակցիա, չպետք է այն ստանա: Հայտնեք ձեր բժշկին, եթե որևէ սուր ալերգիա ունեք:
• Ցանկացած անձի, ով նշանակված ներարկման ժամանակ ծանր հիվանդ է, կարող են խնդրել սպասել մինչև ապաքինումը: Թեթև հիվանդություն ունեցող ցանկացած անձ սովորաբար կարող է պատվաստվել:
• 2 տարեկանից փոքր երեխաները այս պատվաստանյութը չպետք է ստանան:
• Ապացույցներ չկան, որ PPSV-ն վնասակար է հղի կնոջ կամ նրա պտղի համար: Սակայն, նախազգուշական նպատակներով, կանայք, ում անհրաժեշտ է պատվաստանյութը, հնարավորության դեպքում պետք է պատվաստվեն նախքան հղիանալը:



4 Պատվաստանյութից առաջացող ռեակցիաների ռիսկերը

Ցանկացած դեղամիջոցի դեպքում՝ ներառյալ պատվաստանյութը, հնարավոր են կողմնակի ազդեցություններ: Դրանք սովորաբար մեղմ են արտահայտված լինում և անցնում են ինքնաբերաբար, սակայն հնարավոր են նաև լուրջ ռեակցիաներ:

PPSV ստացած մարդկանց մոտավորապես կեսի մոտ կողմնակի ազդեցությունները մեղմ են լինում, ինչպես, օրինակ՝ կարմրաձուլությունը կամ ցավը ներարկման տեղում, որոնք անցնում են մոտ երկու օրվա ընթացքում:

100 մարդուց ընդամենը 1-ի մոտ է առաջանում տենդ, մկանային ցավ կամ ավելի սուր տեղային ռեակցիաներ:

Խնդիրներ, որոնք կարող են առաջանալ ցանկացած պատվաստանյութից՝

- Մարդիկ երբեմն ուշագնաց են լինում բուժօգործողություններից հետո՝ ներառյալ պատվաստումը: Մոտավորապես 15 րոպե նստած կամ պառկած մնալը կարող է օգնել կանխելու ուշաթափությունը և վայր ընկնելու հետևանքով առաջացած վնասվածքները: Հայտնեք ձեր բժշկին, եթե դուք թեթև գլխապտույտ եք զգում, կամ տետստիության փոփոխություն, կամ ականջներում զվզոց եք զգում:
- Որոշ մարդիկ ներարկումից ուսի սուր ցավ են ունենում և դժվարանում են ձեռքը շարժել: Սա շատ հազվադեպ է պատահում:
- Ցանկացած դեղամիջոց կարող է առաջացնել սուր ալերգիկ ռեակցիա: Պատվաստանյութից առաջ եկած նման ռեակցիաները շատ հազվադեպ են՝ միլիոնավոր դեղաչափեր տալուց մոտավորապես 1 դեպք, և կարող են առաջանալ պատվաստումից հետո մի քանի րոպեից մինչև մի քանի ժամվա ընթացքում:

Ինչպես և ցանկացած դեղամիջոցի դեպքում, շատ փոքր հավանականություն կա, որ պատվաստանյութը լուրջ վնասվածքի կամ մահվան պատճառ կհանդիսանա:

Պատվաստանյութերի անվտանգությունը միշտ վերահսկվում է: Կրացուցիչ տեղեկություններ ստանալու համար այցելե՛ք՝ www.cdc.gov/vaccinesafety/

Բժշկական խնամք ապահովող(ներ)ին թույլատրելու համար պատվաստումների իրավիճակի վերաբերող ճշգրիտ տեղեկություն, պատվաստումների գնահատականներ եւ հետագա պատվաստումների առաջադրված գրաֆիկը, տեղեկությունները կուղարկվեն Michigan Care Improvement Registry (Միչիգանի խնամքի բարելավման գրանցման կենտրոն): Անհատներն իրավունք ունեն պահանջելու իրենց բժշկական խնամք ապահովողից, որպեսզի պատվաստումների տեղեկությունները գրանցման կենտրոն չուղարկվեն:

5 Ի՞նչ տեղի կունենա լուրջ ռեակցիայի առկայության դեպքում:

Ի՞նչ պետք է ես փնտրեմ:

Փնտրեք ձեզ վերաբերող ցանկացած բան, ինչպես, օրինակ՝ սուր ալերգիկ ռեակցիայի նշաններ, շատ բարձր ջերմություն կամ անսովոր վարքագիծ:

Սուր ալերգիկ ռեակցիայի նշանները կարող են ներառել՝ ցան, դեմքի և կոկորդի այտուցվածություն, դժվարացած շնչառություն, արագ սրտխփոց, գլխապտույտ և թուլություն: Դրանք սովորաբար սկսվում են պատվաստումից հետո մի քանի րոպեից մինչև մի քանի ժամ անց:

Ի՞նչ պետք է ես անեմ:

Եթե դուք կարծում եք, որ դա սուր ալերգիկ ռեակցիա է կամ այլ անհետաձգելի դեպք, որը չի կարող սպասել, զանգահարեք 9-1-1 կամ գնացեք մոտակա հիվանդանոց: Հակառակ դեպքում՝ զանգահարեք Ձեր բժշկին:

Այնուհետև, ռեակցիայի մասին պետք է հայտնել Vaccine Adverse Event Reporting System-ին (VAERS) (Պատվաստանյութերի հետ կապված անբարենպաստ երևույթների հաշվետվությունների համակարգին): Այդ տեղեկատվությունը պետք է գրանցի ձեր բժիշկը, կամ դա դուք կարող եք անել ինքներդ՝ VAERS վեբ կայքի միջոցով՝ www.vaers.hhs.gov, կամ զանգահարելով **1-800-822-7967** հեռախոսահամարով:

VAERS-ը բժշկական խորհրդատվություն չի տրամադրում:

6 Ինչպե՞ս կարող եմ ավելին իմանալ:

- Հարցրեք ձեր բժշկին: Նա կարող է ձեզ պատվաստանյութի փաթեթի ներդիրը տալ կամ առաջարկել այլ աղբյուրներ՝ տեղեկություններ ստանալու համար:
- Չանգահարեք ձեր տեղական կամ նահանգային առողջապահության դեպարտամենտ:
- Կապվեք Centers for Disease Control and Prevention-ի (CDC) (Հիվանդության վերահսկման և կանխարգելման կենտրոնների) հետ՝
- Չանգահարեք **1-800-232-4636 (1-800-CDC-INFO)** կամ
- այցելեք CDC-ի վեբ կայք՝ www.cdc.gov/vaccines

Vaccine Information Statement
PPSV Vaccine

